

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ
ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԵԾԱՐՄԱՆ
ՑԵՐԵԿՈՒՅԹԻՆ

25.12.2017թ.

Սիրելի դպրոցականներ, հարգելի մանկավարժներ, բարեկամներ:

Այսօր, տարեմուտի նախաշեմին, մենք ամփոփում ենք մարզի կրթության բնագավառի արդյունքները և հանդիսավոր միջոցառմամբ նշում տարվա ընթացքում կրթության բնագավառում աչքի ընկած բոլոր արժանիների հաղթանակները, շնորհավորում հանրապետական և միջազգային առարկայական օլիմպիադաներից հաղթանակներով վերադարձած մեր պատանիներին ու աղջիկներին, մարզում ավանդական դարձած «Իմ ծննդավայրը» խորագրով անցկացված շարադրության մրցության հաղթողներին, նրանց ուսուցիչներին և, իհարկե, հանրապետությունում տարվա լավագույնը ճանաչված մանկավարժներին:

Ուրախ եմ ազդարարելու, որ այսօրվանից այս միջոցառումը կդառնա ավանդական և ամեն տարեմուտի հանդիսավորությամբ կպատվենք և կողջունենք կրթության բնագավառում հաջողություններ ունեցած բոլոր լոռեցիներին:

Անկեղծ ասած, ինձ ուրախացնում է բազմանուն այդ մրցույթներին մեր աշակերտների ակտիվ մասնակցությունը: Իհարկե, ոչ բոլորն են հասնում բաղձալի մրցանակակրի պատվանդանին, սակայն, գիտելիքների և գեղարվեստական ու մարզական մրցույթներում շատերի ձգտումը՝ լավից լավը լինելու համար, արդեն իսկ ցուցանիշ է:

Ի վերջո, այդ մրցույթները նպատակաուղղված են մատաղ սերնդի շարքերում գիտելիքների և կարողությունների մեծ պաշար ունեցող պատանիներին ու աղջիկներին բացահայտելուն և պայմանավորված են լիարժեք քաղաքացի դաստիարակելու մեր կարևորագույն խնդրով:

Կարծում եմ, կհամաձայնեք ինձ հետ, որ դրանց հիմքում, այնուամենայնիվ, հայրենասիրության ուժն ու ավյունն են շարժիչ ուժը, այն արմատը, որը սնում է ապագա գիտնականի և արվեստագետի,

գինվորի և հրամանատարի, հողագործի և բանվորի, ուսուցչի և բժշկի բողբոջը:

Ուստի, շատ կարևոր է, որ դպրոցը լինի ոչ միայն գիտելիքների ուսուցման, այլև հայրենասիրության դաստիարակության դպրոց: Այլապես, մեր բոլոր տեսակի ձեռքբերումներն իզուր կլինեն:

Դա օրվա հրամայականն է և բոլոր մանկավարժների, անկախ այն բանից, թե ինչ առարկա է դասավանդում, բոլոր՝ մանկավարժների թիվ մեկ պարտականությունն է:

Հարգելի բարեկամներ, առիթից օգտվելով ցանկանում եմ առանձնակի կարևորել նաև հանրակրթության ընդհանուր մակարդակի բարձրացման հարցը: Առաջին անգամը չէ, որ այդ մասին հայտնում ենք մեր մտահոգությունը: Ուղղակի ասենք՝ առանձին վերապահումներով, այո՛, մեզ խիստ անհանգստացնում է հանրակրթության ընդհանուր մակարդակը, ինչում համոզվել ենք վերջին տարիներին մարզի դպրոցներում կատարած ուսումնասիրությունների արդյունքում: Մենք լավագույն մանկավարժների մեծ բանակ ունենք, որոնցով հպարտանում ենք, բայց եկեք խոստովանենք, որ քիչ չեն նաև մասնագիտական պատրաստվածության այսօրվա պահանջները ոչնչով չբավարարող ուսուցիչները:

Այստեղ մեծ անելիք ունեն դպրոցների մեթոդմիավորումները, իսկ տնօրենները պետք է մշտապես վերին աստիճանի հետևողական լինեն: Հանրակրթությունը մեր կրթական համակարգի ողնաշարն է, չունեցանք ուսման որակ, հանրակրթության մակարդակը չբարձրացրեցինք, մեր ոչ մի ռազմավարություն արդյունք չի ունենա:

Երբեմն զարմանք է հարուցում մանկավարժներից ոմանց առաջավոր մեթոդների նկատմամբ անվստահություն ունենալու դիրքորոշումը: Նման երևույթներ նկատվեցին հատկապես այն բանից հետո, երբ քայլեր սկսեցինք ձեռնարկել դպրոցները տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցման նոր հնարավորություններով զինելու ընթացքում: Մինչդեռ, աշխարհը փոխվում ու վերափոխվում է մեծ արագությամբ: Ոչ վաղ անցյալում առաջավոր համարված գիտելիքներն ու փորձը շրջադարձորեն դառնում են իրենց դարն ապրած: Ուստի ոչ

միայն պետք է ընդունենք այդ պարզ ճշմարտությունը, այլև ինքներս պետք է պատրաստ լինենք նորագույնն արմատավորելու գործում:

Տեղյակ եք, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը դիտելով առաջնահերթություն՝ Լոռին հայտարարել ենք «Սմարթ» մարզ: Կարճ ժամանակամիջոցում, թվով 16 հանրակրթական դպրոցներում ստեղծվեցին նույնանուն դասարաններ՝ հագեցած ամենաժամանակակից տեխնիկական միջոցներով: Առաջիկայում ևս այդպիսի 7 դասարան կբացվի: Ավելին, նպատակադրվել ենք տարիքային առանձնահատկությունների հասցեավորմամբ, ուսուցման նույնպիսի հնարավորություններ ստեղծել նաև նախակրթարաններում, որպեսզի մեր երեխաները վաղ տարիքից որոշակի ճանաչողական գիտելիքներ ու փորձ ունենան: Այս ամենը չի կատարվում հանուն ցուցադրության կամ ձևամոլական շղարշ ստեղծելու համար, ինչը քաղքենիական մտածողությանն է հատուկ: Մենք լուրջ հիմքեր ունենք համոզվելու, որ 21-րդ դարի երկրորդ քառորդում ապրող քաղաքացին, իր մտավոր կարողությամբ և տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման աստիճանով, մեծապես տարբերվելու է իր նախորդ սերնդից:

Եվ մի՞թե այդ նույն երևույթը մենք չենք տեսնում հիմա՝ ներկայում, նույնիսկ մեր կենցաղում, երբ երիտասարդ ծնողներից շատերն իրենց 10-15 տարեկան երեխաների օգնությանն են դիմում՝ նոր հեռախոսի կամ համակարգչի հնարավորություններն իմանալու համար:

Չօգտագործել բոլոր հնարավորությունները նոր սերնդին տեխեկատվական ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետելու գործում, նույնն է, թե օրը ցերեկով խարխափենք հարթ ճանապարհի վրա, կամ, ժողովրդի լեզվով ասած, չոչ անենք՝ նույն բանը պարտադրելով մեր հասունացած երեխաներին:

Ահա, այսպիսի կարևորագույն պահանջներ ունենք մենք, որոնց լուծման համար առաջին հերթին պետք է հանրակրթության բնագավառը շարունակական կերպով բարեշրջել՝ մի որակական վիճակից դեպի մի նոր որակական վիճակ անցնելու ունակությամբ:

Հարգելի բարեկամներ,

այս ամենով հանդերձ, ուրախությամբ պետք է նշել, որ անցնող տարին իզուր չի անցել մեր մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում: Մենք հպարտ ենք այդ իրողությամբ, որի լավագույն արդյունքների ամփոփմանն էլ հենց նվիրված է այսօրվա հանդիսությունը:

Դիմելով ձեզ, սիրելի աշակերտներ, ջերմորեն շնորհավորելով ձեր հաղթանակները, անհրաժեշտ եմ համարում ասել՝ ինչ ուղղությամբ էլ որ ընթանա ձեր ուղին, շատ կարևոր է հիշելը, որ դուք ազատության սերունդն եք: Սակայն չմոռանանք նաև, որ ազատությունը պահպանել, պաշտպանել ու ժառանգել է պետք: Հայրենիքի հզորացումը, բարեկեցությունը պայմանավորվում են ոչ միայն նյութական միջոցներով, այլև, առաջին հերթին՝ գրագետ ու հայրենասեր սերունդ ունենալով: Ուստի հարուստ գիտելիքներով զինվելը ձեր պարտքն է հայրենի պետության ու հարազատ ժողովրդի հանդեպ:

Ձեզ միշտ հաղթանակներ եմ մաղթում:

Կրկին շնորհավորում եմ օրվա մեր բոլոր հերոսներին:

Շնորհակալություն: